ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿ

ՀՀ փոխվարչապետի գրասենյակի համար

ԲԱԶՄԱՉԱՓ ԱՂՔԱՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԻՆԴԵՔՍ

Բազմաչափ աղքատության ազգային ինդեքսը (ԲԱԻ) երկրում աղքատությունը չափելու գործիք է, որը հարմարեցված է տարբեր երկրների յուրահատկություններին՝ կառուցված «Օքսֆորդի աղքատության և մարդկային զարգացման նախաձեռնության» մեթոդաբանության վրա: Այս ինդեքսն այլընտրանք է աղքատությունը չափելու ավանդական մոտեցմանը, որում աղքատությունը դիտարկվում է զուտ դրամական տեսանկյունից: Փոխարենը՝ աղքատությունը 5 չափականությունների տեսանկյունից դիտարկելը, ներառյալ՝ (1) հիմնարար կարիքներ, (2) բնակարանային պայմաններ, (3) կրթություն, (4) աշխատաշուկա, (5) առողջապահություն, թույլ է տալիս այն ըմբռնել առավել համապարփակ կերպով և լոկալ համատեքստի շրջանակներում:

Այս քաղաքականության առաջարկում ամփոփված են մի քանի հիմնական տվյալներ այն ցուցանիշների նկարագրական վերլուծությունից, որոնց դեպքում զրկանք կրելու մակարդակը Լոռու, Շիրակի և Տավուշի մարզերի բնակչության շրջանում կազմել է առնվազն 50%: Այս տվյալներին հաջորդում են քաղաքականության բարելավման կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ առաջարկներ:

Այս հրապարակումը պատրաստվել է Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ: Այստեղ ներկայացված բովանդակությունը ՀՌԿԿ-Հայաստան հիմնադրամի պատասխանատվությունն է, և պարտադիր չէ, որ այն արտահայտի Եվրոպական միության տեսակետները:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

ԲԱԻ ոլորտներն՝ ըստ ցուցանիշների

Ընտրված 24 ցուցանիշների շարքում աղքատության մակարդակն ամենաբարձրն է արժանապատիվ կյանք, առողջ ջեռուցում, աշխատաշուկայի մասնակցություն և արժանապատիվ աշխատատեղ ցուցանիշների համար: *Զրկանք կրող ՏՏ-ների բաշխումը բոլոր երեք մարզերով.*



1. Առողջ սննդի սպառում

Լոռու, Շիրակի և Տավուշի մարզերում աղքատության վերաբերյալ մեր վերլուծությունը փաստում է այս մարզերում առողջ սննդի սպառման տեսանկյունից զրկվածության առնվազն 50%-ի մասին: Բնակչությանը տրվել է հետևյալ հետևյալ հարցը՝ *«Նախորդ 12 ամիսների ընթացքում գումարի կամ այլ միջոցների բացակայության պատճառով եղե՞լ է այնպիսի պահ, երբ Դուք կամ Ձեր ընտանիքի մյուս անդամները զգան հետևյալ պնդումներից որևէ մեկը»: Եթե հարցվողը պատասխանել է **ԱՅՈ** կետերից առնվազն մեկի համար, («անհանգստացել եք բավարար ուտելիք չունենալու համար», «ի վիճակի չեք եղել առողջ և սննդարար սնունդ ուտել», «միայն մի քանի տեսակի սննդամթերք եք կերել», «ստիպված եք եղել բաց թողնել ճաշը», «ավելի քիչ եք սնվել, քան կուզեիք», «անհանգստացել եք, որ ուտելիքը սպառվել է», «քաղցած եք եղել, սակայն չեք սնվել», «մի ամբողջ օր չեք սնվել»),* ապա տնային տնտեսությունը դիտարկվել է որպես զրկանք կրած:

Առողջ սնվելու առումով զրկվածության ամենաբարձր շեմը գրանցվել է Շիրակում՝ մարզային մակարդակով, և Սպիտակում ու Շիրակի գյուղերում՝ համայնքային մակարդակով:



2. Սննդի հասանելիություն

Սննդի հասանելիությունը ուշադրություն գրավող խնդիր է: Ինչպես փաստում են հետազոտության տվյալները, ուսումնասիրված բոլոր համայնքներում հարցվածների ավելի քան 50%-ը չեն կարող իրենց թույլ տալ յուրաքանչյուր երկրորդ օրը սնվել մսով, հավով, ձկով (կամ համարժեք բուսական փոխարինիչներով՝ բուսակերների համար): Այսպիսի մարդկանց ամենաբարձր տոկոսը գրանցվել է Լոռիում, իսկ համայնքների մակարդակում այս հարցում առաջատարը Սպիտակն է: *Զրկանք կրող ՏՏ-ների բաշխումը ներկայացված է ստորև.*



3. Առողջ ջեռուցում

Այս ցուցանիշը ցույց է տալիս այն տնային տնտեսությունները, որոնց ջեռուցման հիմնական աղբյուրը համարվում է առողջությանը վնասակար: Կենտրոնացված ջեռուցումից, էլեկտրականությունից, բնական գազից կամ հեղուկ գազից բացի ցանկացած այլ աղբյուրով ջեռուցվող տնային տնտեսությունները համարվել են զրկանք կրած: Ըստ այս ցուցանիշի՝ զրկված են համարվել նաև նրանք, ովքեր ընդհանրապես չեն տաքացրել իրենց տունը: *Զրկանք կրող ՏՏ-ների բաշխումը ներկայացված է ստորև.*





4. Կենտրոնացված կոյուղու համակարգ

Այս ցուցանիշը ցույց է տալիս այն տնային տնտեսությունները, որոնք չունեն կենտրոնացված կոյուղու համակարգ: Տնային տնտեսության անդամին տրվել է հետևյալ հարցը՝ «Ի՞նչ տեսակի սանհանգույցից է Ձեր տնային տնտեսությունն օգտվում», և բացառությամբ այն դեպքերի, երբ որպես պատասխան նշվել է «Ողողվող, դեպի կոյուղի», «Զուգարան փոսի ձևով՝ սալահատակած» կամ «Այլ», տնային տնտեսությունը դիտարկվել է որպես զրկանք կրած: *Զրկանք կրող ՏՏ-ների բաշխումը ներկայացված է ստորև.*



Ըստ այս ցուցանիշի՝ Շիրակի, Լոռու և Տավուշի գյուղական բնակավայրերում բնակչության 50%-ից ավելին համարվում է զրկանք կրած: *Զրկանք կրող ՏՏ-ների բաշխումը ներկայացված է ստորև.*



5. Հասանելիություն առողջապահական ծառայություններին
Այն դեպքերում, երբ հարցվածի համար որևէ փոխադրամիջոցով բուժկետ, հիվանդանոց (շտապօգնություն) կամ դեղատուն հասնելու համար անհրաժեշտ ժամանակը գերազանցել է 20 րոպեն, ապա տնային տնտեսությունը համարվել է զրկված: Քաղաքային բնակավայրերում տնային տնտեսություններին այս հարցը չի տրվել, քանի որ վերջիններս չեն դիտարկվում զրկված՝ ըստ այս ցուցանիշի: Անապահովության ամենաբարձր մակարդակն այս ցուցանիշով դիտարկվել է Լոռու գյուղական համայնքներում: *Զրկանք կրող ՏՏ-ների բաշխումը ներկայացված է ստորև.*





ԱՌԱՋԱՐԿՆԵՐ

1. Առաջարկվող քայլեր՝ հասցեագրելու առողջ սննդի սպառման հիմնախնդիրը

Որտեղ.
Շիրակի գյուղական համայնքներ, Լոռու գյուղական համայնքներ, Տավուշի գյուղական համայնքներ, Տավուշի քաղաքային համայնքներ, Գյումրի, Վանաձոր, Սպիտակ, Իջևան

Ինչ (կարճաժամկետ և միջնաժամկետ).
Սուբսիդավորել սննդի հասանելիությունը մանկապարտեզներում և տրամադրել բյուջե դպրոցներին՝ երեխաների սննդարար պարեն ստանալն ապահովելու համար: Սա նաև կնպաստի համայնքների ներսում առողջ սննդային սովորությունների վերաբերյալ իրազեկվածությանը:

Ինչ (երկարաժամկետ).
Մշակել օրենսդրություն պարենի սննդարարության միավորի ցուցադրումը և հաղորդակցումը պարտադիր դարձնելու նպատակով:

2. Առաջարկվող քայլեր՝ հասցեագրելու սննդի հասանելիության հիմնախնդիրը

Որտեղ.
Շիրակի գյուղական համայնքներ, Լոռու գյուղական համայնքներ, Տավուշի գյուղական համայնքներ, Տավուշի քաղաքային համայնքներ, Գյումրի, Վանաձոր, Սպիտակ, Իջևան

Ինչ (երկարաժամկետ).
1. Ստեղծել սննդի վաուչերների համակարգ կարիքավոր մարդկանց համար սնունդն ավելի հասանելի դարձնելու նպատակով:
2. Խթանել/մշակել խրախուսական միջոցներ հյուրանոցային և հանրային սննդի բիզնեսների և մանրածախ առևտրի կետերի համար՝ ժամկետի ավարտին մոտեցող ապրանքների արժեքների նվազեցման նպատակով:
3. Մշակել օրենսդրական կարգեր, որոնք կարգելեն հյուրանոցային և հանրային սննդի բիզնեսներին դեն նետել չօգտագործված/ժամկետը լրացող ապրանքները՝ առանց դրանք բարեգործական նպատակներով նվիրաբերելու առաջարկներ կատարելու (սննդային բանկերին, ՀԿ-ներին, կարիքավոր մարդկանց ուղղակիորեն):

3. Առաջարկվող քայլ՝ հասցեագրելու առողջ ջեռուցման հիմնախնդիրը

Որտեղ.
Շիրակի գյուղական համայնքներ, Լոռու գյուղական համայնքներ, Տավուշի գյուղական համայնքներ, Տավուշի քաղաքային համայնքներ, Սպիտակ

Ինչ (երկարաժամկետ).
Ստեղծել դրամաշնորհային ծրագիր տնային տնտեսությունների համար՝ ուղղված նրանց պատկանող տների վերանորոգմանը՝ ջեռուցման կարիքների նվազեցման նպատակով (ջերմամեկուսացում, պատուհաններ, արևային պանելներ և այլն):

4. Առաջարկվող քայլ՝ հասցեագրելու կենտրոնացված կոյուղու համակարգի հիմնախնդիրը

Որտեղ.
Շիրակի գյուղական համայնքներ, Լոռու գյուղական համայնքներ, Տավուշի գյուղական համայնքներ

Ինչ (երկարաժամկետ).
Ստեղծել դրամաշնորհային ծրագիր համայնքներում սանիտարական խողովակների անցկացման համար:

5. Առաջարկվող քայլ՝ հասցեագրելու առողջապահական ծառայություններին հասանելիության հիմնախնդիրը

Որտեղ.
Շիրակի գյուղական համայնքներ, Լոռու գյուղական համայնքներ, Տավուշի գյուղական համայնքներ

Ինչ (երկարաժամկետ).
Համոզվել, որ յուրաքանչյուր համայնքում առկա է առնվազն մեկ աջակցության կայան քաղաքացիներին առողջապահական ծառայությունների անմիջական հասանելիություն ապահովելու համար: